Գորգի տակ

Դոնալդ Բիսեթ

Վագրն ու ձին ապրում էին հյուրասենյակի գորգի տակ: Նրանք հին բարեկամներ էին: Նրանց դուր էր գալիս հյուրասենյակում ապրելը, որովհետև նրանք սիրում էին հյուրեր ընդունել: Այդ տանն էր ապրում նաև մի աղջիկ: Նրա անունը Շեյլա էր: Մի անգամ աղջիկը հարցրեց նրանց.

– Դուք ինչպե՞ս եք տեղավորվում գորգի տակ:

– Շատ հասարակ: Մենք հո իրական չենք, մենք երևակայական ենք,–պատասխանեցին նրանք:

– Ես երևակայական վագր եմ:

– Ես երևակայական ձի եմ:

– Բա քո խոտը ո՞ւր է,–հարցրեց Շեյլան ձիուն:

– Գորգի տակ,–պատասխանեց ձին,–չէ՞ որ խոտն էլ է երևակայական:

– Քո ոսկորները է՞լ են գորգի տակ,–հարցրեց աղջիկը վագրին:

– Ոսկորնե՞րը... էլ որտե՞ղ լինեն,–պատասխանեց վագրը և շոյեց աղջկան:

Հետո նա մտավ գորգի տակ: Ձին էլ մտավ: Շեյլան մենակ մնաց սենյակում: Նա հանեց թուղթը, մի քանի կտոր շաքար նկարեց և շա՜տ կամաց դրեց գորգի տակ:

Քիչ հետո նա խրթխրթոց լսեց՝ խը՛րթ–խը՛րթ–խը՛րթ...ձին հաճույքով շաքար էր ուտում: Աղջիկը թղթի կտորի վրա գրեց. «Ի՞նչ են սիրում վագրերը» և գրածը կամա՜ց դրեց գորգի տակ:

Գորգի տակից փսփսացին, քիչ հետո վագրը գլուխը դուրս հանեց և պատասխանեց.

– Խոտով բրդուճ:

Շեյլան չհավատաց ականջներին:

– Ա՛յ դու անպետք ձի,–ասաց նա,–խոտով բրդուճ ոչ թե վագրերն են սիրում, այլ՝ ձիերը: Շուտ արա, գնա վագրին հարցրու, թե ինքն ինչ է ուզում:

Ձին պահ մտավ, վագրը դուրս եկավ.

– Ես ձեռքի ժամացույց եմ ուզում,–ասաց նա,– որ իմանամ ժամը՝ քանիսն է:

– Եղավ,–ասաց Շեյլան:

Աղջիկը ձեռքի ժամացույց նկարեց և տվեց վագրին: Հետո ձիու համար խոտով բրդուճներ նկարեց: Վագրն էլ մտավ գորգի տակ: Մի՜ քիչ հետո երկուսով կրկին հայտնվեցին:

– Մեծ–մեծ շնորհակալություն ֆեզ, Շեյլա՛,– ասացին նրանք և համբուրեցին աղջկան:

– Մտածե՛ք, թե ձեզ ինչ է պետք և շուտ ասեք,–ասաց Շեյլան: –Թե չէ իմ ֆնելու ժամանակն է, պիտի գնամ ֆնեմ:

– Դե՜... մենք հովանոց կուզեինք,–ասացին վագրն ու ձին:

– Հովանո՞ց,–զարմացավ Շեյլան: — Ի՞նչ է, գորգի տակ անձրև է գալի՞ս: Հա՜, հասկացա, դա երևակայական անձրև է:

– Այո՛, երևակայական,–ասացին նրանք: Աղջիկը նրանց հանար հովանոց նկարեց:

– Շնորհակալություն,–ասացին վագրն ու ձին,– բարի գիշեր:

– Բարի գիշեր,–պատասխանեց Շեյլան և գնաց ֆնելու: Հետո հանկարծ նրա

գլխում մի միտք ծնվեց. «Երևի վատ բան է, համարյա վիրավորական, երբ դու նոր, գեղեցիկ հովանոց ունես, իսկ անձրև չի գալիս»: Նա մեծ թղթի վրա անձրև նկարեց, զգույշ մտավ հյուրասենյակ և անձրևը դրեց գորգի տակ: Երբ առավոտյան Շեյլան հյուրասենյակ մտավ, հայտնվեց ջրում: Իսկ վագրն ու ձին նստել էին բաց հովանոցի մեջ և լողում էին, ոնց որ նավակի մեջ լինեին:

– Երևի հորդ անձրև եմ նկարել,–մտածեց Շեյլան:

Վաղը չէ մյուս օրը նա կրկին հյուրասենյակ մտավ: Մայրիկն այդ ժամանակ գորգն էր ավլում: Ո՛չ ջուր կար սենյակում, ո՛չ հովանոց, ո՛չ վագր, ո՛չ էլ ձի, ոչ մի բան չէր մնացել: Շեյլան վերցրեց նկարելու տետրը և մուշ–մուշ ֆնած վագր ու ձի նկարեց: Մայրիկը գնաց: Շեյլան նստել էր վառարանի մոտ և կրակին էր նայում: Հյուրասենյակում լուռ էր, միայն գորգի տակից խոմփոցի ձայն էր լսվում: